

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

14.07.2015թ

գ. Մերձավան

• 2015թ գարնանը զինակոչային հասակի /1999թ ծնված/ պատանիները ներկայացվել են էջմիածնի զինվորական կոմիսարիատ՝ բժշկական հետազոտման, գյուղապետարանը անմիջական աջակցություն է ցուցաբերվել գարնանային զորակոչին, ապահովել է զինապարտների ակտիվ մասնակցությունը Հայկական բանակի զորավարժանքներին:

- Մերձավան համայնքի 2015թ. առաջին կիսամյակի ֆոնդային բյուջեն եկամտային մասով կազմում է 27 736 000դրամ, ծախսային մասը կազմել է 13 757 000դրամ:
- Մանկապարտեզի աշխատանքները կորորդինացնելու, ժամանակին ու անթերի կազմակերպելու համար 2015թ առաջին կիսամյակում տրամադրվել է, որպես սուբսիդիա՝ 7 450 000դրամ այն ուղղվել է աշխատավարձի, կոմունալ ծառայությունների, սննդի , նորոգումների և սարքավորումների ձեռք բերման համար:
- 2015թ. առաջին կիսամյակում գյուղապետարանը բնակիչներից ստացել է 84 դիմումներ, որոնք քննարկվել են ու ժամանակին տրվել են պատասխաններ:
- Գյուղապետարանը բնակիչներին տվել է 408 տեղեկանք, ստացվել է 153 պաշտոնական նամակներ, կայացվել է ավագանու 28 որոշումներ, համայնքի ղեկավարի 5 կարգադրություններ , ընդունել է համայնքի ղեկավարի 44 որոշումներ:
- Կատարվել է 2 աճուրդ՝ մեկ հասրակական կառուցապատման 0,00237հա և մեկ գյուղատնտեսական նշանակության 4-րդ կարգի 0.2715հա:
- Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվել է 3 530 000 դրամ դրամական օգնություն, այդ թվում Մերձավանցի նորածին 16 երեխաների ծնողներին՝ 50000-ական դրամ ընդամենը հատկացվել է 800 000դրամ:
- 2015թ „Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի միջոցառումների շրջանակում համայնքի դպրոցի բակում տեղադրվել և օծվել է ԽԱԶՔԱՐ, համայնքի հուշարձանների հրապարակում տեղադրվել է Հայոց Ցեղասպանության զոհվածների և Հայրենական Մեծ Պատերազմի զոհվածներին նվիրված հուշարձաններ և ծախսվել է 1 000 000դրամ գումար: Ցեղասպանությունից փրկվածների ընտանիքներին տրամադրվել է համերգի տոմսեր 30 000դրամ արժողությամբ, տնկվել է ծառեր 100000 դրամ արժողությամբ: Գյուղապետարանի , մշակույթի տան, մանկապարտեզի, դպրոցի, փոստի, բուժ ամբուլատորիայի աշխատակիցների համար գնվել է „ Գիշեր Երզնկայի վրա„ ներկայացման տոմսեր և ծախսվել է 30000դրամ գումար, գյուղապետարանի աշխատակիցների համար մայրաքաղաքի Հ. Պարոնյանի անվան թատրոնում կազմակերպված հումորային երեկոյի համար գնվել են 45 000 դրամ արժողության տոմսեր:
- Կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության տոնին նվիրված ցերեկույթ՝ գյուղապետարանի, մշակույթի տան, մանկապարտեզի, միջնակարգ դպրոցի,

փոստի, բուժ ամբուլատորիայի աշխատակիցների, ավագանու անդամների և համայնքի բնակիչների մասնակցությամբ և որի համար ծախսվել է 819 000 դրամ:

- Գյուղապետարանը «Ամանորի», «Կանանց միջազգային տոնի», «Մայրության և գեղեցկության օրվա» կապակցությամբ գյուղապետարանի, փոստի, մանկապարտեզի, մշակույթի տան, բուժ ամբուլատորիայի աշխատակիցների նվերների գնման համար ծախսել է 300 000 դրամ:
- Համայնքի գյուղապետարանի, մշակույթի տան և մանկապարտեզի աշխատակիցների առողջության ապահովագրության համար „ՌՅԱՌ„ՓԲԸ վճարվել է 1 080 000 դրամ:
- Համայնքի մանկապարտեզի ավարտական հանդեսին գյուղապետարանը նվիրել է ավագ խմբի 41 սաներին պաուսյակներ և գրենական պիտույքներ:
- ՀՄՊ հաղթանակի 70-ամյա տարելիցին համայնքի գյուղապետարանի և մշակույթի տան համար պատրաստվել և տեղադրվել է ՀՄՊ և Արցախյան ազատամարտի մասնակիցների միասնական ստենդ-լուսանկար:
- 2015թ գյուղապետարանի ընթացիկ վերանորոգման համար ծախսվել է 949 760 դրամ:
- Մշակույթի տան նկուղային հարկի վերանորոգման համար ծախսվել է 948 809 դրամ գումար:
- 2015թ. առաջին կիսամյակում համայնքի գիշերային լուսավորության վառված լամպերի փոխվել և ծախսվել է 100000 դրամ:
- Համայնքի մանկապարտեզի վերանորոգման համար ծախսվել է 10 653 635 դրամ:
- Համայնքի մանկապարտեզի բակի բազալոտ սալիկապատման համար ծախսվել է 950 000 դրամ:
- Համայնքի մանկապարտեզի համար գնվել է 994 000 դրամ արժողության մահճակալներ:
- Համայնքի գրադարանի համար ձեռք է բերվել 50 000 դրամ արժողությամբ գրքեր:
- 2015 թվականի թերթերի բաժանորդագրման համար ծախսվել է 256 000 դրամ:
- Համայնքի միջնակարգ դպրոցի «Վերջին դասի» կազմակերպումը հովանավորել է գյուղապետարանը և ծախսել է 80 000 դրամ:
- „Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն,, ամենամյա մրցանակաբախշության համար տրամադրվել է 500 000 դրամ:
- Հակակարկտային կայանների հեզուկ գազի ձեռք բերման համար վճարվել է 220 000 դրամ գումար:
- Համայնքների միության անդամակցության համար վճարվել է 32 500 դրամ:
- Ժամանակին կատարվում է երեխաների բժշկական պրոֆիլակտիկ պատվաստումները, հաշմանդամության կարգ ունեցող բնակիչները 0-7 տարեկան հիվանդ երեխաները, հաշմանդամները, շաքարային դիաբետով հիվանդները ստանում են իրենց անհրաժեշտ, անվճար դեղորայքը:
- Մերձավան համայնքի ֆուտբոլային թիմը մշտապես մասնակցում է հանրապետական, մարզային առաջնություններին, ֆուտբոլի փնջային մրցաշարերին և բազմիցս արժանացել է պատվոգրերի:
- Համայնքի կուլտուրայի տանը գործում է ֆուտբոլի, պարի, նկարչության, կարատեյի ինքնագործ խմբակներ, բոլոր միջոցառումների կազմակերպմանը և մասնակիցների տեղափոխմանը աջակցում է գյուղապետարանը:
- Համայնքի ֆուտբոլի թիմի մասնակիսների համազգեստի ձեռք բերման համար վճարվել է 240 000 դրամ:

- 2015թ առաջին կիսամյակում գյուղապետարանը համայնքի խաղահրապարակներն ու փողոցները զարդարել է, գեղեցկացրել է ամանորի լույսերով և զարդերով, ծախսել է 150 000դրամ:
- Համայնքում աղբահանման աշխատանքները կազմակերպելու համար առաջին կիսամյակում տրամադրվել է 1 100 000դրամ, այն կատարվում է շաբաթական երկու անգամ:
- Համայնքի կոյուղին շատ հին է և հաճախակի նորոգման կարիք է ունենում՝ 2015 թվականի առաջին կիսամյակում շուրջ 600 գծամետր կոյուղու ջրագիծ է մաքրվել՝ ծախսվել է 400000 դրամ:
- Քաղաքացիների, ինչպես նաև «Երկրագործության և բույսերի պաշտպանության» գիտական կենտրոն ՊՈԱԿ աշխատակիցների, դիմումների հիման վրա դարձյալ կատարվել է համայնքի բնակիչների և այգեգործական ընկերության անդամների հողակտորների չափագրման և սահմանների ճշտման աշխատանքներ:
- Համայնքում շարունակում է գործել «Արեգակ» վարկավորման ծրագիրը, մասնակիցների թիվը շարունակական ավելանում է, որը համայնքի կին բնակիչներին հնարավորություն է տալիս զարգացնելու իրենց բիզնեսը:
- Գյուղապետարանը, ժամանակին կազմել և ներկայացրել է բոլոր հաշվետվությունները ըստ պատկանելիության:
- Գյուղապետարանը մշտապես աջակցում է բնակչության էլեկտրամատակարարման, խմելու ջրի սպասարկման, ոռոգման ջրի մատակարարման, գազամատակարարման, կոյուղու սպասարկման ծառայություններ իրականացնող աշխատակիցներին:

2015թ-ին համայնքի հիմնախնդիրներն են.

1. Դպրոցի վերանորոգում:
2. Ոռոգման համակարգի որոշակի հատվածի վերակառուցում:
3. Փողոցների մասնակի անփախտապատում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՒՈՎԱՆ



Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ